

**«ԼՈՂԱՅՈՂ (ՓՈՓՈԽՎՈՂ) ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

ք. _____

" ____ " _____ 201__թ.

«Ամերիաբանկ» ՓԲԸ-ն, այսուհետև՝ Բանկ, ի դեմս _____, որը գործում է _____ ի հիման վրա, մի կողմից, և _____-ը տվյալները/ (_____), այսուհետև՝ Հաճախորդ կամ Վարկառու, մյուս կողմից, միասին անվանվելով «Կողմեր», կնքեցին _____ Վարկային պայմանագրի տվյալները _____ **«XXXX Վարկային Պայմանագրի» անբաժանելի մասը կազմող** «Լողացող (փոփոխվող) տոկոսադրույքի սահմանման և հաշվարկման մասին» սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կողմերը սույնով սահմանում են _____ Վարկային պայմանագրի տվյալները _____ պայմանագրով նախատեսված վարկի տոկոսադրույքի (տոկոսի չափի) պարբերական վերանայումը և փոփոխման կարգը՝ կապված շուկայական տոկոսադրույքների համահունչ փոփոխության հետ, ինչի արդյունքում ժամանակի ցանկացած պահին տոկոսադրույքները հնարավորինս համապատասխանում են շուկայական տոկոսադրույքներին՝ սույն Համաձայնագրով սահմանված կարգով:

1.2. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է _____ Վարկային պայմանագրի տվյալները _____ **«XXXX /Վարկային/ Պայմանագրի»՝ այսուհետև Հիմնական Համաձայնագիր** անբաժանելի մասը:

1.3. Հիմնական Համաձայնագրով սահմանված տոկոսադրույքը Կողմերը սույնով դիտարկում են իբրև լողացող և փոփոխական՝ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

2 ԼՈՂԱՅՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

2.1. Հիմնական Համաձայնագրով սահմանված լողացող տոկոսադրույքը կազմված է հետևյալ բաղկացուցիչներից (տարրերից).

2.1.1. Փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)

2.1.2. Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ

2.2. Լողացող տոկոսադրույքը սույն Համաձայնագրով սահմանված կարգով հաշվարկված անվանական տոկոսադրույք է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$S_L = S_F + S_{FS}$$

որտեղ՝

S_L – Լողացող տոկոսադրույք

S_F – Փոփոխուն բաղադրիչ (բազային տոկոսադրույք)

S_{FS} – Հաստատուն (ֆիքսված) բաղադրիչ

2.3. Լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչի (բազային տոկոսադրույքը) կախված վարկի արժույթից, որոշվում է հետևյալ շուկայական տոկոսադրույքների միջոցով՝

2.3.1. ՀՀ դրամով լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչի (բազային տոկոսադրույքի) համար շուկայական տոկոսադրույք է համարվում 6 ամիս ժամկետայնությամբ ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունը:

2.3.2. ԱՄՆ դոլարով լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչի (բազային տոկոսադրույքի) համար շուկայական տոկոսադրույք է համարվում ԱՄՆ դոլարով 6 ամիս ժամկետայնությամբ Լոնդոնի Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքը (BBA LIBOR USD 6 Month):

2.3.3. Եվրոյով լողացող տոկոսադրույքի փոփոխուն մասի (բազային տոկոսադրույքի) համար շուկայական տոկոսադրույք է համարվում Եվրոյով 6 ամիս ժամկետայնությամբ Լոնդոնի Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքը (BBA LIBOR EUR 6 Month):

2.4. Լողացող տոկոսադրույքի հաստատուն (ֆիքսված) բաղադրիչը որը սահմանվում է վարկավորման պայմաններով և ամրագրվում է վարկային պայմանագրով յուրաքանչյուր վարկի դեպքում առանձին՝ հիմք ընդունելով վարկի տրամադրման վերաբերյալ Բանկի իրավասու մարմնի որոշումը:

2.5. Սույն Համաձայնագրի և Հիմնական Համաձայնագրի իմաստով Հաճախորդի (Վարկառուի) համար Լողացող տոկոսադրույքի փոփոխուն բաղադրիչը (բազային տոկոսադրույքը) Հիմնական Համաձայնագրի կնքման պահին կազմում է _____ ^{նշել չափը} տոկոս, իսկ Հաստատուն (ֆիքսված) մասը կազմում է _____ ^{նշել չափը} տոկոս: Հիմնական համաձայնագրի և/կամ սույն Համաձայնագրի կնքման պահին բազային տոկոսադրույքը կարող է չհամապատասխանել 2.3 կետի ենթակետերում նշված չափորոշիչների հիման վրա սահմանված չափերին, սակայն լողացող տոկոսադրույքի հետագա փոփոխությունների կատարումը իրականացվում է սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

3 ԲԱԶԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԴՐՈՒՄԸ, ԹԱՐՄԱՑՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ

3.1. ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները (եկամտաբերության կոր)՝ հետևյալ հղմամբ՝

<https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx>

3.2. ԱՄՆ դոլարով և Եվրոյով 6 /վեց/ ամիս ժամկետայնությամբ Լոնդոնի Միջբանկային Առաջարկի Տոկոսադրույքի (BBA LIBOR USD 6 Month և BBA LIBOR EUR 6 Month) վերաբերյալ տվյալների աղբյուր կարող են հանդիսանալ, համապատասխանաբար, հետևյալ հղումներում տեղադրված տեղեկատվությունը՝

<http://research.stlouisfed.org/fred2/series/USD6MTD156N%20>

և

<http://research.stlouisfed.org/fred2/series/EUR6MTD156N>

- 3.3. Սույն Համաձայնագրի 3.1 և 3.2. կետերում նշված ինտերնետային հղումների փոփոխումը որևէ ազդեցություն կամ հետևանք չի կարող ունենալ սույն Համաձայնագրի և/կամ նրա գործողության հանդեպ, բացառությամբ սույն Համաձայնագրի 5.1. կետում նշված հատուկ դեպքերի:
- 3.4. Բազային տոկոսադրույքի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը: Ընդ որում՝
- 3.4.1. Փետրվարի 1-ի համար Բազային տոկոսադրույքը հավասար է նախորդ տարվա հունիսի 1-ից մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ համապատասխան տոկոսադրույքի թվաբանական միջինին:
 - 3.4.2. Օգոստոսի 1-ի համար Բազային տոկոսադրույքը հավասար է տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ տարվա հունիսի 31-ը ներառյալ համապատասխան տոկոսադրույքի թվաբանական միջինին:
 - 3.4.3. Ոչ աշխատանքային օրերին միջինի հաշվարկում կրկնվում է նախորդ աշխատանքային օրվա տոկոսադրույքը:
- 3.5. Բազային տոկոսադրույքը տեղադրվում է Բանկի պաշտոնական կայքում՝ յուրաքանչյուր կիսամյակը մեկ՝ փետրվար և օգոստոս ամսվա առաջին երեք աշխատանքային օրերի ընթացքում: Ընդ որում, Հաճախորդի համար Բանկի կայքում տոկոսադրույքի փոփոխության տեղադրումը համարվում է Հաճախորդի /Վարկառուի/ համար փոփոխության մասին պատշաճ տեղեկացում և ծանուցում:

4 ԼՈՂԱՑՈՂ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

- 4.1. Սույն Համաձայնագրի հիման վրա լողացող տոկոսադրույքի առաջին վերանայումը տեղի է ունենում Հիմնական Համաձայնագրի կնքումից երեք տարի հետո: Դրանից հետո պարբերական վերանայումները կարող են իրականացվել յուրաքանչյուր վեց ամիսը մեկ: Մինչև վերանայման առաջին ամսաթիվը Բազային տոկոսադրույք է համարվում Հիմնական Համաձայնագրի կնքման ամսաթվին գործող Բազային տոկոսադրույքը:
- 4.2. Յուրաքանչյուր վերանայման ամսաթվից մինչև հաջորդ վերանայման ամսաթիվը Բազային տոկոսադրույք է համարվում վերանայման տվյալ ամսաթվի դրությամբ գործող բազային տոկոսադրույքը, և վարկի տոկոսավճարների հաշվեգրումն ու գանձումը կատարվում է վերանայված տոկոսադրույքով:
- 4.3. Տոկոսադրույքների վերանայման ամսաթիվ է համարվում Բազային տոկոսադրույքի փոփոխման հերթական ամսաթվին (փետրվար և օգոստոս ամիսների առաջին օրը) հաջորդող մոտակա մարման ամսաթիվը:
- 4.4. Լողացող տոկոսադրույքի փոփոխությունը պարտադիր կատարվում է, եթե առկա է բազային տոկոսադրույքի փոփոխություն մեկ տոկոսից ավելի չափով, որը հաշվարկվում է՝ սկսած Հիմնական Համաձայնագրի կնքման օրվանից մինչև հերթական փոփոխության փաստացի

կատարման օրը: Բազային տոկոսադրույքի մեկ տոկոսից ավելի փոփոխության դեպքում համահունչ փոփոխությունը կարող է լինել առավելագույնը նշված տարբերության չափով, սակայն Բանկի հայեցողությամբ փոփոխությունը կարող է լինել ավելի փոքր չափով, բայց ոչ պակաս քան 0.5%: Օրինակ, եթե գործող Բազային տոկոսադրույքը 8.0% է, իսկ հաշվարկված նոր տոկոսադրույքը 9.5%, ապա Բանկը պարտավոր է փոփոխել տոկոսադրույքը 0.5%, 1.0% կամ 1.5% չափով: Բանկը տոկոսադրույքների փոփոխության նշված պարտավորությունն ունի և՛ դրական, և՛ բացասական շեղման դեպքում:

- 4.5. Բազային տոկոսադրույքի փոփոխությունը կատարվում է Բանկի հայեցողությամբ, եթե տոկոսադրույքի փոփոխությունը ցածր է կամ հավասար մեկ տոկոսի:
- 4.6. Բազային տոկոսադրույքը հաշվելիս (ներառյալ՝ սույն Համաձայնագրի 4.4. և 4.5. կետերում նշված բազային տոկոսադրույքի փոփոխության հաշվարկի դեպքում) համապատասխան հաշվարկներն իրականացվում են մաթեմատիկական կլորացման կանոններով՝ 0.5 /զրո ամբողջ հինգ տասնորդական/ տոկոսի ճշգրտությամբ: Օրինակ՝ 8.23%-ը կդիտվի իբրև 8.0%, իսկ 8.41%-ը՝ իբրև 8.5%:
- 4.7. Փոփոխված տոկոսադրույքը կիրառվում է վարկի մնացորդի նկատմամբ և ոչ շուտ, քան Վարկառուին այդ մասին ցանկացած եղանակով տեղեկացնելուց մեկ ամիս հետո:
- 4.8. Կողմերը սույնով հավաստում են, որ ցանկացած դեպքում Վարկի տոկոսադրույքը չի կարող գերազանցել ---- տոկոսը և նվազել -----տոկոսից:

5 ԲԱՑԱՌԻԿ ԶԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

5.1. Սույն Համաձայնագրի դրույթների և մասնավորապես սույն Համաձայնագրով նախատեսված հաշվարկների կատարումն անհնարին կամ խիստ դժվար իրագործելի դառնալու դեպքում, Բանկն իրավունք ունի միակողմանիորեն որոշում կայացնել Բազային տոկոսադրույքների կիրառման դադարեցման վերաբերյալ (ժամանակավորապես կամ ընդմիջա): Բանկի նման միակողմանի որոշումը պարտադիր է երկու կողմերի համար: Նման բացառիկ հանգամանքներից են՝

- 5.1.1. Տեղի են ունենում էական փոփոխություններ շուկայական տոկոսադրույքի հաշվարկման կարգում:
- 5.1.2. Դադարեցվում են տվյալ տոկոսադրույքի վերաբերյալ 2.3.1., 2.3.2. կամ 2.3.3. կետերում նշված տվյալների հրապարակումը՝ համապատասխան արժույթի նկատմամբ,
- 5.1.3. Բանկի իրավասու մարմնի հիմնավոր կարծիքով տվյալ տոկոսադրույքն այլևս չի արտահայտում շուկայական իրավիճակը:
- 5.1.4. ՀՀ օրենսդրական փոփոխությունները արգելում կամ անհնարին են դարձնում տոկոսադրույքի փոփոխությունը սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:
- 5.1.5. Տնտեսագիտորեն կամ իրավաբանորեն այլ ակնհայտ հիմնավոր և բացառիկ պատճառներով ու հիմքերով:

- 5.2.** Լողացող տոկոսադրույքի դադարեցման վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում, բոլոր գործող լողացող տոկոսադրույքով վարկերի համար որոշման ընդունման պահին գործող լողացող տոկոսադրույքը կարող է հաստատվել որպես Ֆիքսած տոկոսադրույք, որն ուժի մեջ է մինչև տվյալ վարկի ամբողջությամբ մարման ժամկետը:
- 5.3.** Լողացող տոկոսադրույքների կիրառումը կարող է վերականգնվել Բանկի որոշմամբ, եթե դադարել են սույն Համաձայնագրի 5.1 կետում և/կամ դրա ենթակետերում նշված դեպքերը: Բանկի նման միակողմանի որոշումը պարտադիր է երկու Կողմերի համար:

6 ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

- 6.1.** Սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Համաձայնագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և/կամ կանխարգելել:

7 ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 7.1.** Սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների կատարումը պարտադիր է Կողմերի իրավահաջորդների համար:
- 7.2.** Սույն Համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
- 7.3.** Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Համաձայնագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը:

8 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բ Ա Ն Կ

Հ Ա Ճ Ա Խ Ո Ր Դ / Վ Ա Ր Կ Ա Ռ ՈՒ